

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	ԼՈՒԻ ԲԵՐԴ
ՄԱՐԶ	ԼՈՒԻ



1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 2.5-րդ մասի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի՝ 2017թ. նոյեմբերի 5-ին կայացած միավորվող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից հետո ՀՀ Լոռու մարզի Ագարակ, Բովաձոր, Լեջան, Լոռի Բերդ, Կողես, Հովնանաձոր, Յաղդան, Սվերդլով, Ուռուտ գյուղերը ընդգրկվել են Լոռի Բերդ համայնքի կազմում և վերանվանվել Լոռի Բերդ համայնքի բնակավայրեր: Այսպիսով, ներկայում Լոռի Բերդ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ Ագարակ, Բովաձոր, Լեջան, Լոռի Բերդ, Կողես, Հովնանաձոր, Յաղդան, Սվերդլով, Ուռուտ գյուղերը: Համայնքի կենտրոնը Լոռի Բերդ գյուղն է:

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

Ագարակ բնակավայր

Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 43 կեռավորության վրա: Նախկինում ունեցել է Ագրակ, Ակրակ, Էգրակ, Էքրե անվանումները: Բնակավայրը տեղակայված է Ձորագետի ձախ ափին, սարահարթու ծովի մակարդակից 1380 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամռանը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղում են 600-700 մթնոլորտային տեղումներ: Ագրոկլիմայական տեսանկյունից ընկած է մասնաև ոռոգման գոտում:

Բնակավայրը դեռևս հիշատակվում է 13-րդ դարում և մտել է Գուգարք աշխարհ Տաշիրք գավառի մեջ: Ունի 17-րդ դարում կառուցված եկեղեցի: Ագարակի մոտ գտնվում է համանուն մենաստանը: Շրջակայքում կան շատ հին բնակավայրերի, Ա Աստվածածին եկեղեցու ավերակներ:

Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը խոտհարքերը: Բնակավայրի մասնագիտական ուղղությունը երկրագործությունը: Զբաղվում են դաշտավարությամբ, պտղաբուծությամբ(տանձ, խնձոր, կեռաս), մշակում են հացահատիկային, կերային, բանջարաբուստանային կուլտուրաներ: Զբաղվում են նաև խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

Բովաձոր բնակավայր

Լոռի Բերդ համայնքի Բովաձոր բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 42 կեռավորության վրա: Բնակավայրի տարածքով անցնում է «Լոռվա ջրանցք» ոռոգման համակարգը: Բնակավայրը հիմնադրվել է 1820թ., ծովի մակարդակից բարձր է 1430 մ:

Բնակավայրի աշխարհագրական դիրքը հարմար է, կլիմայական պայմաններ անբարենպաստ: Տարվա եղանակներից անհամեմատ նպաստավոր է աշունը, ձմռան երբեմն խստաշունչ է, ձյան քիչ ծածկույթով, գարնունը սովորաբար ուշացած է գալի իսկ ամառը զով, անձրևային, հաճախակի քամիներով: Լինում է նա

կարկտահարություն:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անսանապահությամբ: Բնակավայրն ունի մեկ միջնակարգ դպրոց, ակումբ, որը վերակառուցվել է 2001թ. 1991թ. գերմանական «Կարմիր Խաչի» կողմից բուժկետ:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

Լեջան բնակավայր

Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 43 կմ հեռավորության վրա: Բնակավայրը կազմավորվել է մոտավորապես 1850-ական թվականներին: Գտնվում է ծովի մակարդակից 1460մ բարձրության վրա: Բնակավայրը հյուսիսային կողմում սարեր են, արոտավայրեր, արևելյան կողմում մոտ 40 խորությամբ ձորն է և անտառը, հարավային և արևմտյան կողմերում վարելահողեր են: Բնակավայրի կլիման վերջին տարիներին խիստ փոխվել է: Նախկին ձյունառածյան փոխարեն ներկայումս շատ քիչ ձյուն է տեղում, գարունը ցուրտ է, ամառը՝ զով հսկ աշունը տաք և անձրևային: Հաճախակի են կարկտային, երաշտի տարիները որոնք մեշ վնաս են հասցնում գյուղատնտեսությանը:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անսանապահությամբ: Արտադրվում է ցորեն, կարտոֆիլ, կերի արմատապտուղ, բանջարաբուստանային կուլտուրաներ, միս, կաթ, մեղր, բուրդ և ձու:

Բնակավայրն ունի միջնակարգ դպրոց: Բնակավայրն ունի 5-րդ դարում կառուցված 19-րդ դարում վերակառուցված եկեղեցի:

Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 43 կմ հեռավորության վրա: Բնակավայրը կազմավորվել է մոտավորապես 1850-ական թվականներին: Գտնվում է ծովի մակարդակից 1460մ բարձրության վրա: Բնակավայրը հյուսիսային կողմում սարեր են, արոտավայրեր, արևելյան կողմում մոտ 40 խորությամբ ձորն է և անտառը, հարավային և արևմտյան կողմերում վարելահողեր են: Բնակավայրի կլիման վերջին տարիներին խիստ փոխվել է: Նախկին ձյունառածյան փոխարեն ներկայումս շատ քիչ ձյուն է տեղում, գարունը ցուրտ է, ամառը՝ զով հսկ աշունը տաք և անձրևային: Հաճախակի են կարկտային, երաշտի տարիները որոնք մեշ վնաս են հասցնում գյուղատնտեսությանը:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անսանապահությամբ: Արտադրվում է ցորեն, կարտոֆիլ, կերի արմատապտուղ, բանջարաբուստանային կուլտուրաներ, միս, կաթ, մեղր, բուրդ և ձու:

Բնակավայրն ունի միջնակարգ դպրոց: Բնակավայրն ունի 5-րդ դարում կառուցված 19-րդ դարում վերակառուցված եկեղեցի:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

Լոռի Բերդ բնակավայր

Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 38 կմ հեռավորության վրա: Բնակավայրը հիմնադրվել է 1750-ական թվականներին, ծովի մակերևույթից բարձր է 1380մ: Բնակավայրը գտնվում է Լոռու մարզի Ձորագետ և Ուռուտ գետերի միջնահատվածում, պատմական «Լոռե Բերդաքաղաքի» ավերակների մոտ, պատմական նշանակություն ունեցող դամբարադաշտերի վրա: Բնակավայրի տարածքով է անցնում Ստեփանավան – Ալավերդի ավտոճանապարհը:

Բնակավայրից 1կմ դեպի արևելք կառուցված է «Աշոտ - Երկաթ» պատմամշակութային ամրոցը, որտեղից գյուղացիները տեղափոխվել են այժմյան բնակավայրերը, կառուցվել է 9-11-րդ դարերում, այժմ գտնվում է կիսավեր վիճակում: Շրջակայքում կան միջնադարյան կառույցներ՝ «Լոռե Բերդաքաղաքը»՝ 10-րդ դար, եկեղեցի 12-13-րդ դարեր, կամուրջ՝ 10-13-րդ դարեր, բաղնիք՝ 12-13-րդ դարեր, գյուղատեղիներ և եկեղեցի՝ դարմանաթաղ գյուղատեղիում, 10-րդ դար: Բնակավայրի աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները անբարենպաստ են: Տարվա եղանակներից անհամեմատ լավ է աշունը, գարունը ուշ է գալիս, հաճախակի քամիներով, իսկ ամառը տաք է, լինում են նաև կարկտահարություններ: Զբաղվում են հիմնականում անասնապահությամբ և հողագործությամբ: Բնակավայրն ունի հիմնական դպրոց:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

Կողես բնակավայր

Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 52կ հեռավորության վրա: Բնակավայրում և շրջակայքում պահպանվել են քառակրկոթողներ 5-րդ դար, եկեղեցի 11-րդ դար, գերեզմաններ խաչքարերով 12-13-րդ դարեր, կամուրջ 13-րդ դար, Տուտիկ իշխանի կառուցած հուշակոթողը 1241թ.:

Զբաղվում են անասնապահությամբ, կարտոֆիլի, հացահատիկային և կերային կուլտուրաների մշակությամբ: Բնակավայրն ունի հիմնական դպրոց:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

Հովնանաձոր բնակավայր

Լոռի Բերդ համայնքի Հովնանաձոր բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1480 բարձրության վրա, շրջապատված է բարձր քարաժայռերով, սարադաշտերով լանջերով ու սառնորոկ աղբյուրներով: Մեծ Ական աղբյուրից բխող ինքնահոս ջուր ապահովում է գյուղի բնակչությանը խմելու ջրով:

Բնակավայրի կլիման երկարատև ձմռանը ցուրտ է, իսկ կարճատև ամռանը՝ ոչ շատաք: Հաճախակի են չորոյին տարիները, անձրևային կարկտահարությունը:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ: Կարտոֆիլի բանջարաբուստանային կուլտուրաների արտադրությամբ:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

Յաղդան բնակավայր

Լոռի Բերդ համայնքի Յաղդան բնակավայրը հիմնադրվել է 1821թ., նախկինում ունեց է եղիտանք հայկական անվանումը: Այստեղ հույներ են եկել Օսմանական կայսրության Մաշալա գյուղից: Այն հայտնի է որպես հունական գյուղ: Այսօր հույների թիվը զգալիորեն պակասել է 1991թ. սկսած արտագաղթի պատճառով դեպի պատմական հայրենի Հունաստան: Բնակավայրի հեռավորությունը մարզկենտրոնից 48կմ է: Բնակավայր գտնվում է ծովի մակերևույթից 1350մ բարձրության վրա: Շրջապատված է բարձր սարերով, որոնց լանջերին կան մի քանի փոքրիկ բնական աղբյուրներ:

Բնակավայրի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով:

Բնակավայրի շրջակայքում պահպանվել են եկեղեցի 17-րդ դար, մատուռներ գերեզմանոց՝ խաչքարերով 13-17-րդ դարեր, գյուղատեղիներ, կամուրջ 13-րդ դար:

Բնակչությունը զբաղվում է ցորենի, կարտոֆիլի արտադրությամբ:

անասնապահությամբ:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

Սվերդլով բնակավայր

Լորի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրը հիմնվել է 18-րդ դարի առաջին կեսին Հիմնադիրները եղել են գյուղից 6կմ հյուսիս-արևելք գտնվող Դորբանդ կոչվող բնակավայրի բնակիչները: Բնակավայրն ավելի հին է, քան ենթադրվում է, ինչի մասին է խոսում գյուղի կենտրոնում տուֆից և բազալտից կերտած 5-7-րդ դարերի լապահպանված Ս. Գևորգ եկեղեցին: Եկեղեցին հիմնովին վերանորոգվել է 19-րդ դարում և հարավային մուտքի առջև կառուցվել է զանգակատուն: Եկեղեցու նեղ և ձգված դահլիճը չորս զույգ որմնանյութերով և թաղակիր կամարներով բաժանվում է հին հատվածի: Կիսաշրջանաձև հատակագծով խորանի երկու կողմերում արսիղները ուղղանկյուն ավանդատներ են:

Բնակավայրը գտնվում է Ուռուտ գետի ափին, ծովի մակերևույթից 1480մ բարձրությամբ: Բնակավայրի հեռավորությունը մարզկենտրոնից 48կմ է: Բնակավայրի միջոցով հոսում է Միսխանա գետը:

Բնակավայրի կլիման ձմռանը խստաշունչ է, ամռանը՝ զով, հաճախակի տեղումները նաև կարկուտով:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է ցորենի, գարու, կարտոֆիլի քանջարաբուստանային կուլտուրաների արտադրությամբ, զբաղվում են նաև անասնապահությամբ:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

Ուռուտ բնակավայր

Լորի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրը գտնվում է Ուռուտ գետի ափին բնակավայրի հեռավորությունը մարզկենտրոնից 43կմ է: Ուռուտ գետը պատված է եղուղիներով , որի պատճառով գյուղը և գետը այդպես են անվանվել: Բնակավայրը հիմնվել է 19-րդ դարի սկզբին: Ուռուտ գյուղը փռված է Մեծ քար կոչվող սարի լանջի 2կմ երկարությամբ: Կողքով հոսում է Ուռուտ գետը: Բնակավայրի արևելյան մասում գտնվում եկեղեցին, իսկ հարավ-արևմտյան մասում է գտնվում Սուրբ Սարգիս մատուռը:

Բնակավայրի ծովի մակերևույթից բարձր է 1450մ: Բնակավայրի կլիման ձմռանը խստաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են անձրևոտ, նաև լինում են կարկտահարություններ:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	683 մմ
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (°C)	-4,2 °C
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (°C)	16,7 °C

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից	
---	--

1.1) Ագարակ	5 կմ
1.2) Բովաձոր	5 կմ
1.3) Լեջան	3 կմ
1.4) Կողես	15 կմ
1.5) Հովնանաձոր	12 կմ
1.6) Յաղրան	10 կմ
1.7) Սվերդլով	12 կմ
1.8) Ուռուտ	8 կմ
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	-----
3. Համայնքի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	165 կմ
3.2) մարզկենտրոնից (կմ)	38 կմ
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	35 կմ
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	2 կմ
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	2 կմ
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	35 կմ
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1380 մ
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	17041.53 1704.153
6. Սահմանակից համայնքների անվանումները	Օձուն Ստեփանավան Գյուլագարակ Սարչապետ
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	loriberd.lori@mta.gov.am
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	loriberdhamaynq.am
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	093-21-33-43
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	026-2-14-75
11. Համայնքի հեռախոսային կոդը	/0256/
12. Համայնքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	1901
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	5369
2. Գրանցված ծնունդների քանակը	56
2. Մահացության դեպքերի քանակը	52
3. Ամուսնությունների քանակը	20
4. Ամուսնալուծությունների քանակը	0

5. Տնային տնտեսությունների թիվը	1737
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	337
7. Կենսաթոշակառուների քանակը	682
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	168

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	-
2. Արվեստի դպրոցների քանակը	-
3. Երաժշտական դպրոցների քանակը	-
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	8
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	-
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	-

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ ²)	163539
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	-
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	1760

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	17041.53
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	14596.30
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	693.49
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	4967
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	2906
7. Խոզերի գլուխաքանակը	943
8. Գյուղատնտեսական տեխնիկա	943
8.1 տրակտորներ (քանակը)	220
8.2 կոմբայններ (քանակը)	5
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	1760

9. ԵՆԹԱԿԱՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	1
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	7 կմ
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	36
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	4
6.2 Էքսկավատորների քանակը	45
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	-
6.4 Գրեյդերների քանակը	-
6.5 քանակը	-
6.6 Աղբատար մեքենաների քանակը	-
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	-
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	-
6.9 Ավտոաշտարակների քանակը	1
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	5 կմ
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը եկամուտներ	146 125.6	146 720.0
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	43 537.4	42 282.4
2.1 հողի հարկ	31 852.6	29 443.07
2.2 գույքահարկ	11 684.8	12 839.4
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը		
3.1 դոտացիա	83 554.5	83 554.4
3.2 սուբվենցիա	7 200,0	7 200,0
4. Մուտքեր հողի օտարումից		

Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	153 344.5	108 888,9

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	74645.0	42391.0
---	---------	---------

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	91704.76	59451.6

11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝	44
1.1 համայնքային ծառայողներ	12
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	66484.34
3. Ավագանու անդամների թվաքանակը	11

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
1. Համայնքում ջրամատակարարման համակարգի ներքին ցանցի անբավարար վիճակ	հնարավոր է միայն պետության աջակցությամբ
2. Ճանապարհների անբարեկարգ վիճակ 1) ներհամայնքային ճանապարհներ 2) միջհամայնքային ճանապարհներ	1) համայնքի բյուջե և պետության կողմից տրամադրվող սուբվենցիա 2) հնարավոր է միայն պետության աջակցությամբ
2. Բնակավայրերում համայնքային կենտրոնների անհրաժեշտություն	համայնքի բյուջե և պետության կողմից տրամադրվող սուբվենցիա
3. Համայնքի գիշերային լուսավորության ընդլայնում	համայնքի բյուջե և պետության կողմից տրամադրվող սուբվենցիա